ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎՈՉԽԱՐՆԵՐԻ
ՋՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

636.3
П-39

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библ-ка
ՀԽՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳՅՈՒՂՀՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ 1936

16.07.2013

22.274

Խմբագիր՝ Գար. Հակոբյան
Գլավլիտի լիազոր—1105, Հրատ. № 378, պատվեր 638, տիրաժ 700
Հանձնված է արտադրության 14|IX 1936
Ստորագրված է տպելու 21|IX 1936

Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան № 11

ՍՐ
636.3
Ո-39
30 JUL 2010
40504

ՀՐԱՀԱՆԳ

ՎՈՉԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վոչխարաբուծական ապրանքային ֆերմաներում զուգավորման կամպանիայի կազմակերպումն ու անցկացումը վճռական նշանակություն ունեն ֆերմայի հոտի վորակական ու քանակական ցուցանիշների աճման, ապրանքայնության և յեկամտի բարձրացման գործում։

Վոչխարների զուգավորման կամպանիայի հաջող անցկացումը պահանջում է ժամանակին և կանոնավոր նախապատրաստվել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ֆերմայի բոլոր հնարավորություններն ու պայմանները։

Այս հրահանգը պիտի մշակվի վոչխարաբուծական յուրաքանչյուր ֆերմայի բրիգադային և արտադրական խորհրդակցություններում։

Զուգավորման կամպանիայի նախապատրաստումը պիտի սկսել վոչ ուշ, քան տվյալ շրջանի համար նախատեսված զուգավորման ժամանակից 1 ու կես ամիս առաջ։ Այդ ժամանակամիջոցում վոչխարաբուծական յուրաքանչյուր ֆերմայում պիտի կատարել հետևյալ աշխատանքները.

1. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՊԼԱՆԸ

Յուրաքանչյուր վոչխարաբուծական ֆերմայի վոչխարների զուգավորման պլանը պիտի արտահայտի.

ա) մայրերի քանակն ըստ ցեղերի և հոտերի.

բ) արտադրողների քանակն ըստ ցեղերի և հոտերի, արտադրողների պակասը վերտեղից պիտի ստացվի և ինչ ժամկետում.

գ) արհեստական սերմնավորման յենթակա և ձեռնաքաղ յեղանակով զուգավորվելիք մայրերի քանակը.

դ) մայրերի ընտրությունը համապատասխան արտադրողների համար.

ե) պարտականությունների բաշխումն ինչպես առանձին բրիգադների, նույնպես և բրիգադների ներսում կոլտնտեսականների միջև.

զ) ունեցած կերի քանակը և այն ծախսելու կարգը, նույնպես և արոտների ոգտագործումն ինչպես զուգավորման կամպանիայի նախապատրաստման, այնպես և նրա անցկացման ամբողջ ժամանակաշրջանում.

է) ձեռնաքաղ զուգավորման և արհեստական սերմնավորման համար անհրաժեշտ ինվենտարով և շենքերով ապահովված լինելը։

Զուգավորման կամպանիայի անցկացման ժամկետները։

Զուգավորման կամպանիայի պլանը պիտի կազմի ֆերմայի վարիչը՝ հովիվների հետ միասին, որը պիտի հաստատվի կոլտնտեսականների ընդհանուր ժողովում վոչ ուշ, քան զուգավորումն սկսելուց 1 ու կես ամիս առաջ։

2. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մայրական հոտերն ապասարկող բոլոր կոլտնտեսականները, նախքան զուգավորման անցկացումը, պիտի պատրաստվեն շրջաններում կազմակերպվելիք կարճատև կուրսերում կամ շրջանային ու կոլտնտեսությունների զոովետերինարական անմիջական հրահանգման միջոցով։

Մայրական հոտում աշխատող յուրաքանչյուր կոլտնտեսական հովվի պիտի հայտնի լինի այս հրահանգը, և նա լավ պատք ե տիրապետի ձեռնաքաղ զուգավորման տեխնիկային։

Այն կոլտնտեսականները, որ նշանակված են աշխատելու արհեստական սերմնավորման գծով, իրենց ունեցած ընդհանուր գիտելիքներից բացի, պիտի պատրաստվեն արհեստական սերմնավորման կայանի հրահանգչի միջոցով։

3. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԺԱՄԿԵՏԸ

Վոչխարների հղիության շրջանը տևում 145—155 որ (5 ամիս)։ ՎԱԾ զուգավորման կամպանիան պիտի անցկացնել, հաշվի առնելով հետևյալը.

ա) ծինը գցել գարնան այն շրջանը, յերբ գառների աճեցման համար ամենանպաստավոր ժամանակն ե լինում, հիմնականում վոչխարների արոտային շրջանի դուրս գալու նախորյակին։

Վաղ ծինը, գառների խոշոր սատկումներից խուսափելու համար, թույլատրելի չե այն տնտեսություններում, որոնք լրիվ չափով ապահովված կլինեն հատուկ տաք շենքերով, լավագույն սիլոսով, խոտով և խտացրած կերով.

բ) ծինը պիտի անցկացնել. 3—4 շաբաթվա ընթացքում, սակայն մասսայական ծինը պիտի տեղի ունենա 15—17 որում։ Ավելի յերկարաձգվող ծինը պահանջում ե աշխատանքի ավելի գործադրում և, բացի այդ, ստացվում ե հասակի մեծ տարբերություն ունեցող սերունդ, որի հետևանքով ել ուշ ծնված գառները թույլ են զարգանում չդիմանալով ամառային շոգերին։

Զուգավորման կամպանիան պիտի ավարտել 30—35 որվա ընթացքում։ Ղեկավարը կատարելիս պիտի հաշվել 155 որ այն ժամկետից, յերբ ցանկանում ենք վոչխարների ծինը։

Այն կոլխոզները, որոնք խառացրած ծին են կազմակերպում (տարեկան 2 ծին, կամ 3 ծին յերկու տարում) զուգավորման և ծնի ժամկետների ճիշտ որոշումը հիշյալ միջոցառման հաջողության համար ունի շատ խոշոր նշանակություն։

Ինչպես ամռան շոգը, նույնպես և ձմռան ցուրտը դանդաղեցնում է մայրերի ցանկության գալը։

Սակայն լավագույն խնամքի և կերակրման միջոցով կարելի է վոչխարների զուգավորման ժամկետն աշնան ամիսներից փոխադրել ամռան և գարնան ամիսներին։ 2 տարում 3 ծին կազմակերպելու համար կարելի է ընդունել զուգավորման հետևյալ մոտավոր ժամկետները։

ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ	ԾԻՆ
1936թ. ոգոստոս-սեպտեմբեր	1937թ. հունվար-փետրվար
1937թ. ապրիլ-մայիս	1937թ. սեպտեմբեր-հոկտեմբեր
1937թ. նոյեմբեր-դեկտեմբեր	1938թ. ապրիլ-մայիս

Կարակուլ վոչխարների հոտերում, որոնց վորձ գառները մորթվում են 1—2 որական հասակում, մայրերն ավելի հեշտությամբ կարող են խոյի գալը։

Այդ իսկ տեսակետից կարակուլի բոլոր ֆերմաներում պետք է կազմակերպել մայրերի II զուգավորում, անմիջապես գառի մորթումից հետո, հենց առաջին ցանկության հայտաբերման ժամանակ։

4. ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գոտեների ոգտագործման կարգը

Զուգավորման կամպանիայի նախապատրաստման և նրա անցկացման ամբողջ ժամանակաշրջանում մայրական հոտերին և խոյերին հատկացվում են լավագույն արոտները։ Վոչխարանոցներից կամ վոչխարների գիշերելու վայրից հեռու գտնվող արոտները պիտի ոգտագործել զուգավորման կամպանիայի նախապատրաստման ժամանակամիջոցում։ Մոտակա արոտավայրերը, որոնք հատկացված են ձեռնաքաշ զուգավորման և արհեստական սերմնավորման համար, պիտի ոգտագործել զուգավորման ժամանակամիջոցում։

Կերի պաշարը զուգավորման կամպանիայի նախապատրաստման և նրա անցկացման ամբողջ ժամանակամիջոցում

Նախապատրաստման (1—1 ու կես ամիս) և զուգավորման կամպանիայի ամբողջ ժամանակաշրջանում (1—1 ու կես ամիս) ՎԱՃ պիտի ապահովված լինի խառացրած կերով (գարի, կորեկ, վարսակ), հաշվելով մեկ խոյին որական 0,8 կիլոգրամ, իսկ նիհար և թույլ մայրերին, որոնք կարիք ունեն լրացուցիչ կերի՝ որական 0,2 կիլոգրամի հաշվով։ Խոյերի համար լավագույն կերեր են համարվում կորեկը, վարսակը, թեգը և գարին։

5. ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈՏԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻՆ

Մայրական հոտերում կոմպլեկտավորում յեվ խառացնում կատարելը

ա) Բարձր մթերատվություն ունեցող ինչպես զատրյուն, նույնպես և տեղական լավացրած բոլոր մայր վոչխարները, որոնք գարնանը բոնիտիրովկայի չեն յենթարկվել, աշնանը՝ բեղմնավորումից մեկ ամիս առաջ՝ բոնիտիրովկայի պիտի յենթարկվեն։

Խոյերի և մայրերի ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել բազմապտղության վրա։ Բազմապտուղ մայրերին պիտի ամրացնել խոյեր, որոնք ծնվել

են բաղմապտուղ ընտանիքներում, կամ բաղմապտուղ մայրերից։

բ) մայրական հոտերի կոմպլեկտավորումը պիտի վերջացնել մայրական հոտերը վերակազմելու ժամանակ, որը կատարվում է գառներին ծծից կտրելուց և վոչխարների խոտանումից անմիջապես հետո։

Խոտանման պիտի յենթարկել բոլոր անատամ կամ ատամները շարժվող մայրերին, կրծի խրոնիքական հիվանդություն ունեցողներին և բոլոր հասակի անբուժելի հիվանդ մայրերին։

Անասնաբուժական-նախազգուշական միջոցառումներ յեվ նրանց անցկացման ժամանակը

Նախքան մայրական հոտերի վերակազմումը, բոլոր վոչխարներն անասնաբուժական պերսոնալի կողմից ստուգման պիտի յենթարկվեն։

1. Քոսով հիվանդ վոչխարներին զուգավորման պիտի թողնել միայն հակաքոսային լուծույթներն անցնելուց և վերջնականապես բուժվելուց հետո։

2. Վարակիչ վիժումով հիվանդ մայրերին պիտի մեկուսացնել առանձին խմբում և նրանց համար նշանակել առանձին խոյեր, որոնց չպետք է առողջ հոտերի մեջ թողնել։ Ցեղական բարձրարժեք խոյերին զուգավորման նպատակով չի կարելի թողնել հիվանդ մայրերի հոտի մեջ։ Վարակիչ վիժումով հիվանդ կամ կասկածելի խոյերին արգելվում է զուգավորման թողնել։

3. Զուգավորման յենթակա վոչխարների հոտերում անասնաբուժական նախազգուշական և մասսայական բուժման բոլոր միջոցառումները, կապված վարակիչ հիվանդությունների բուժման և նախազգուշացման հետ, պիտի

ավարտել՝ սրսկումները 1 ու. կես ամիս, իսկ հակաքոսային լողացումները և ճիճվային հիվանդությունների բուժումը՝ 1 ամիս, զուգավորումն սկսելուց առաջ։

Մայրական հոտերի կոմպլեկտավորումը պիտի ավարտված լինի մինչ հակաքոսային լողացումները, որից հետո հոտերում վերակազմություններ չպիտի կատարել։

Հոտերի վերակազմումը

Խոտանում կատարելուց հետո ՎԱՖ մնացած բոլոր մայրերը պիտի վերակազմել առանձին հոտերում, պահպանելով հետևյալ կանոնները.

1. Հոտերի վերակազմումը պիտի կատարել ըստ վոչխարների ցեղերի, դասերի և բոնիտիրովկայի։ Այն հոտերում, որտեղ բոնիտիրովկա չի անցկացվում, մայրական հոտերի խմբավորումները պիտի կատարել ըստ ցեղերի և հասակի, իսկ կոպտաբուրդ վոչխարներինը՝ նաև ըստ բրդի գույնի և գիրության։

Մետիս մայրերից հոտեր պիտի վերակազմել վոչ թե ըստ առանձին սերունդների, այլ նրանց գեղմերի դասերի համաձայն։

2. Մայրական հոտի մեծությունը 500 գլխից ավելի չպիտի լինի։

3. Մատղաշներին և թույլ ու նիհար մայրերին պիտի առանձնացնել առանձին հոտերում, հատկացնելով լավագույն արոտներ, միաժամանակ տալով խտացրած լրացուցիչ կեր՝ մեկ գլխին օրական 0,2 կիլոգրամի հաշվով։

4. Այն մայրերը, որոնք ընթացիկ տարում չեն ծնել, պիտի առանձնացնել և առանձին հոտ կազմել, իսկ յեթե դրանց թիվը քիչ է, թողնել մայրական ընդհանուր հոտի մեջ, նշանելով ալդպիսիներին և յենթարկելով անասնաբուժական ստուգման։

5. Այն հոտերում, որտեղ գարնանը յեղել է մասսայական վիժում, յեթե անգամ ապացուցված չի նրա վարակիչ բնույթ ունենալը, հոտը պիտի վերակազմել այնպես, որ հիշյալ հոտի մայրերը հոտերը վերակազմելու ժամանակ չընկնեն առողջ հոտերի մեջ։ Արգելվում է նաև վարակիչ վիժումով կասկածելիներին խառնել առողջ հոտերին։ Վարակիչ վիժում ունեցած հոտերի համար պիտի առանձնացնել խոյեր, որոնց՝ զուգավորման համար՝ չի կարելի թողնել այլ հոտերի մեջ։

Վարակիչ վիժումով կասկածելի հոտերում պիտի սահմանել անասնաբուժական մշտական հսկողություն, նրանց զուգավորման համար առանձնացնելով խոյերի առանձին խումբ։ Նման մայրական հոտերում լավ է անցկացնել արհեստական սերմնավորում։

Վարակիչ վիժումով հիվանդ հոտերի հովիվներին առողջ հոտեր փոխադրելն անթույլատրելի է։

Զուգավորման յենթարկվող մայրերի տարիքը

ա) Վորպես կանոն, զուգավորման պիտի թողնել տկած 1 ու կես տարեկան հասակ ունեցող մաքիներից։

բ) այն վոչխարաբուծական ֆերմաները, որոնք բեղմնավորման կամպանիայի ժամանակ, մսուրային խնամքի և ծնի ժամանակաշրջանում, ապահովված կլինեն տաք վոչխարանոցներով, թույլատրվում է բեղմնավորման թողնել լավ զարգացած և գիրացած 9—10 ամսական եգ գառներին։

Եգ գառների զուգավորման թողնելը յուրաքանչյուր առանձին դեպքերում (կոլտնտեսությունում) պիտի կատարվի շրջհողբաժնի թույլտվությամբ։

Զուգավորման նախապատրաստելը

ՎԱՖ բոլոր մայր վոչխարները զուգավորման ժամանակ պիտի ունենան միջակ գիրություն։ Այդ վիճակում վոչխարների դոչի գալը կանոնավոր է ընթանում, և զուգավորումը վերջանում 3—4 շաբաթվա ընթացքում։ Շատ նիհար կամ շատ ճարպակալած վոչխարները դժվարությամբ են դոչի գալիս, որի հետևանքով մեծ քանակությամբ սուերջներ են լինում և գառների ծինը ձգձգվում է։

Զուգավորումից վոչ պակաս քան 1 ամիս առաջ վոչխարների կիթը պիտի դադարեցնել, որպեսզի այդ ժամանակամիջոցում մայրերը կազդուրվեն։ Նիհար մայրերի կիթը պիտի դադարեցնել 1 ու կես ամիս զուգավորումից առաջ։ Զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում վոչխարներին աղ տալը պարտադիր է։

6. ՀՈՏԵՐԸ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐԵԼԸ ԽՈՅԵՐՈՎ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻՆ

Խոյերի պահանջի հաշվառումը

ՎԱՖ խոյերի կոմպլեկտավորումը պիտի կատարել համաձայն ընդունված պլանային ցեղի, հետևյալ հաշվով.

Զեռնոխաս զուգավորման ժամանակ

2 և բարձր տարիք ունեցող խոյին . . 60—75 մայր
1 ու կես տարեկան խոյին . . . . . 40—45 »

Արհեստական սերմնավորման ժամանակ

1 խոյին վոչ պակաս . . . . . 200 մայր

Դասային զուգավորման պիտի թողնել միայն տեղական կոպտաբուրդ վոչխարներին։

Մերինոս և Կարակուլ խոյերին պիտի ոգտագործել ձեռնաքաշ զուգավորման ձևով։

Արհեստական սերմնավորման և ձեռնաքաշ զուգավորման ժամանակ պահանջվում են փորձախոյեր, վորոնք ընտրվում են 2—$3^1/_2$ տարեկան տեղական յեռանդուն խոյերից, հաշվելով 1 խոյին 100 մայր։ ՎԱՖ համար պահանջվող խոյերի ընդհանուր քանակից բացի, անհրաժեշտ է խոյերի 10% չափով լրացուցիչ խոյեր ունենալ՝ փոխարինելու այն խոյերին, վորոնք այս կամ այն պատճառով չեն աշխատի, միաժամանակ հաշվի առնելով կոլտնտեսականների վոչխարների հոտերի մայրական կազմի խոյերով ապահովելը։

Զուգավորման մասնակցող խոյերի տարիքը

Խոյերին, ինչպես և մայրերին, վորպես, կանոն զուգավորման պիտի թողնել, սկսած $1^1/_2$ տարեկան հասակից։ Յերբ անհրաժեշտ քանակությամբ $2^1/_2$ տարեկանից բարձր խոյեր կան տնտեսության մեջ, այդ ժամանակ $1^1/_2$ տարեկան մատղաշ խոյերի բեռնվածությունը պակասեցվում է, սակայն վոչ մի դեպքում մատղաշ խոյերին չպիտի ազատել զուգավորումից, վորովհետև պիտի ստուգել նրանց սերնդի վորակը, վորպեսզի հաջորդ տարում հնարավոր լինի լավագույն խոյերին հնարավորին չափով ավելի ոգտագործել։

Ցուրաքանչյուր խոյի բեռնավորումը սահմանվում է, յելնելով նրա տոհմային հատկություններից։

Խոյերի խոտանումն ու սնուցումը

Վոչխարաբուծական այն ֆերմաները, վորոնք անց են կացնում տեղական վոչխարների մետիզացիա՝ մերինոս, կարակուլ և այլ կուլտուրական ցեղի խոյերով, անհրաժեշտ է հենց գարնանից տեղական կոպտաբուրդ խոյերին անջատել ֆերմայի հոտից։ Վոչ մի դեպքում չթույլատրել մայրերին և տեղական խոյերին մեկ տեղ պահել։

Խոյերի խոտանում կատարելիս ավելի պահանջկոտ պետք է լինել, քան մայրերի նկատմամբ։

Խոտանման պիտի յենթարկել.

ա) այն խոյերին, վորոնք նախորդ զուգավորման կամպանիայի ընթացքում ճանաչված են վորպես իմպոտենտ (սեռականապես թույլ), սերունդ չտվողներ կամ թույլ սերունդ ունեցողներ.

բ) սեռական գործարանների դեֆեկտ և գրիժա ունեցողներին, սեռական գործարանների անբուժելի բորբոքում ունեցողներին և անհուսալի հիվանդներին.

գ) ֆիզիկապես չզարգացածներին, արտաքին վատ հատկանիշներ և այլ արատ ունեցողներին, հատկություններ, վորոնք անցնում են ժառանգաբար։

Խոտանումից հետո, արհեստական սերմնավորման համար նշանակված բոլոր խոյերի սերմաբջիջները քննության պիտի յենթարկել՝ իմանալու համար սերմնորդի ակտիվությունը։ Այդ աշխատանքը կատարում է արհեստական սերմնավորում անցկացնող հրահանգիչը (տես արհեստական սերմնավորման հրահանգը։ Այն խոյերին, վորոնց սերմնորդը կճանաչվի անպետք, պետք է յենթարկել խոտանման՝ յեղջյուրների վրա խաչաձև նշան անելով (խարանել)։

Այն վոչխարաբուծական ֆերմաները, վորոնք ունեն արհեստական սերմնավորման կայաններ, պարտավոր են զուգավորման կամպանիայից 1,5 ամիս առաջ ստուգել խոյերի սպերմի վորակը (տես արհեստական սերմնավորման հրահանգը)։ Այն վոչխարաբուծական ֆերմաները, վո-

որոնք չունեն արհեստական սերմնավորման կայաններ, կարող են իրենց խոյերի սերմնորդի վորակն ստուգել մոտակա հարևան արհեստական սերմնավորման կայաններում։

Կամպանիայավորում

Ցերման խոյերի պակասը ձեռք է բերում խորհտնտեսություններից կամ այլ կազմակերպություններից։ Գնված բոլոր խոյերը պիտի տեղափոխել ֆերմա վոչ ուշ, քան զուգավորման կամպանիան սկսելուց 2 ամիս առաջ և յեղած խոյերի հետ նախապատրաստել զուգավորման։

Զուգավորման համար խոյերի նախապատրաստումը

Զուգավորման համար խոյերին նախապատրաստելու ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել.

1. ավարտելուն՝ խոյերի, մանավանդ մերինոս և կիսակոպտաբուրդ խոյերի վերջնական բուժմանը՝ քոսից.

2. խոյերին միջակ գիրության հասցնելուն։

Ինչպես խոյերի, նույնպես և մայրական հոտերում բոլոր տեսակի բուժումներն ու նախազգուշական միջոցառումները պիտի ավարտել՝ հակաքոսային լողացումները և ծաղկի դեմ սրսկումները $1^1/_2$ ամիս, իսկ թոքաստամոքսային ճիճուների մաքրելը՝ 1 ամիս զուգավորումից առաջ։

Զուգավորման համար խոյերի նախապատրաստման հիմնական աշխատանքն ուղղված պիտի լինի նրանց արոտային խնամքի բարելավման վրա, հանձնելով այդ խնամքը հարվածային, լավագույն հովիվներին։

Զուգավորման կամպանիայի նախապատրաստման ամբողջ ժամանակաշրջանում խոյերին պիտի արածեցնել մայրական հոտերից հեռու գտնվող լավագույն արոտներում, միաժամանակ նրանց կերակրելով խտացրած կերերով

Խտացրած կերերով լրացուցիչ կերակրելը պիտի սկսել՝ խոյերի միջակ գիրության դեպքում՝ 1 ամիս, իսկ նիհար լինելու ժամանակ՝ $1^1/_2$—2 ամիս՝ զուգավորումն սկսելուց առաջ։ Վարսակ, գարի, կորեկ պետք է տալ, սկսած 0,2 կիլոգրամից, զուգավորման կամպանիայի սկզբին հասցնելով 0,8—1,0 կիլոգրամի։ Նույն կերաբաժինն էլ շարունակել տալ մինչև զուգավորման կամպանիայի վերջը։ Բարձրարժեք խոյերին, վորոնք նշանակված են արհեստական սերմնավորման համար, և վորոնք որական 4—5 ծածկում պետք է կատարեն, անհրաժեշտ է որական կերաբաժնի մեջ մտցնել նաև ձու՝ 2—4 հատ, քաշած կաթ՝ 1—2 լիտր։

Անհրաժեշտ է խտացրած կերը տալ որական յերեք անգամ հավասար չափով։

Վատ արոտների դեպքում անհրաժեշտ է խոյերին կերակրել նաև լրացուցիչ խոտով։ Ինչպես սակավ կերակրելը, նույնպես և չափազանց ուժեղ կերակրելը վատ է անդրադառնում խոյերի աշխատունակության վրա, վորովհետև ինչպես նիհարած, նույնպես և շատ ճարպակալած խոյերն անկարող են կանոնավոր աշխատել և ծածկել սահմանված քանակությամբ մայրեր, վորի հետևանքով մայրերի վորոշ մասը մնում է ստերջ և բարձրացնում է ստերջության տոկոսը։

7. ՇԵՆՔԵՐԻ ՑԵՎ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մայրական բոլոր հոտերը, զուգավորման որացուցային պլանի համաձայն, ամրացվում են համապատասխան վոչխարանոցների և աղաչների, վորտեղ և պատրաստում են ձեռնաքաշ զուգավորում անցկացնելու բոլոր պարագաները՝ կերամաններ, շչիտներ, ջրամաններ, պատ-

գարակները, լապտերները, համարակալելու ունելի և անհրաժեշտ քանակությամբ ականջի համարներ։

Վոչխարանոցը կամ աղալը, վորտեղ անց է կացվում ձեռնաքաշ զուգավորումը, տախտակներով կորել մի քանի բաժինների։

Փորձախոյերի համար պիտի պատրաստել յերկուական զոգնոց։

Զուգավորում անցկացվող բոլոր շենքերը պիտի մաքրել և ախտահանել։

Նպատակ ունենալով վոչխարանոցների շրջակայքում յեղած արոտները պահպանել ձմռան և ծնի կամպանիայի համար՝ անհրաժեշտ է լավ յեղանակներին վոչխարների զուգավորումն անցկացնել ոգտագործվող հերթական արոտամասում, վորտեղ հարկավոր է անհրաժեշտ հարմարություններ ստեղծել՝ բեղմնավորումը հաջող անկացնելու համար։

8. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՑԵՎ ԽՈՅԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԶՈՒԳԱՎՈՐՍԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Զուգավորման ժամանակամիջոցին չի կարելի խոյերին մայրական հոտերի շրջակայքում արածեցնել, վորովհետև դրանից խոյերը նի՛ստրում են։ Աղալներում, վորտեղ անց է կացվում զուգավորումը, խոյերին պետք է պահել այնպիսի ցանկապատած բաժանմունքներում, վորոնց պատերը լինեն բավական բարձր և ամուր, վորպեսզի խոյերը չկարողանան ցատկել, վորից նրանք հաճախ ջարդվածքներ են ստանում։ Զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում փորձախոյերի նկատմամբ պիտի սահմանել նույն խնամքը, ինչ վոր խոյերինն է, սակայն փորձախոյերը մյուս խոյերից պիտի առանձին պահել։

Խոյերին զուգավորման կամպանիայի նախապատրաստման և անցկացման ամբողջ ժամանակաշրջանում պետք է արածեցնել լավագույն արոտներում, տալով միաժամանակ նաև լրացուցիչ խտացրած կեր՝ գարի, կորեկ, վարսակ՝ մեկ գլխին որական 0,8—1,0 կիլոգրամ։ Զուգավորման վերջին շրջանում, յերբ խոյերի բեռնվածության նորման 1 մայրից չի անցնում, խտացրած կերի քանակը պիտի պակսեցնել 25 %։

Յերբ խոյերն այլևս արոտ չեն գնում, անհրաժեշտ է նրանց ամեն որ դուրս բերել մաքուր ոդի մեջ, ամեն անգամ $1^1/_2$ ժամ տևողությամբ, առանց վորի խոյերը կորցնում են իրենց աշխուժությունը և վատ են աշխատում։ Յերբ խոյերն ոգտագործվում են արհեստական սերմնավորման և ձեռնաքաշ զուգավորման համար, վաղ առավոտյան, վոչ ուշ քան զուգավորումից $1^1/_2$ ժամ առաջ, խոյերին պիտի տալ խտացրած կերերի որական կերաբաժնի $^1/_8$, վորից հետո խոյերին քշել զբոսանքի, իսկ փորձախոյերին թողնել փորձարկման (խոյի յեկող մայրերի հայտաբերման)։ Զուգավորումից մեկ ժամ հետո խոյերին ջրել և քշել արոտի։

Խտացրած կերերի որական կերաբաժնի մնացած մասը տրվում է խոյերին հավասար չափով, որական կերաբաժնի $^1/_3$ չափով, ցերեկը և յերեկոյան ջրելուց հետո։

Արոտ դուրս գալու դեպքում խոյերին պետք է տալ լավորակ խոտ՝ առվույտ, յերեքնուկ և այլն։ Զուգավորման կամպանիան վերջանալուց հետո խտացրած կերի նորման աստիճանաբար պիտի պակսեցնել և 10—12 որվա ընթացքում հասցնել կերակրման սովորական նորմաներին։

Անհրաժեշտ է յերկար բուրդ ունեցող խոյերի սեռական գործարանների շուրջը յեղած բուրդը ժամանակին խուզել, վորպեսզի զուգավորման ժամանակ չվնասի խոյի և մաքուր սեռական գործարանները։

9. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Վոչխարների զուգավորումը կարող է կատարվել բնական ճանապարհով և արհեստական սերմնավորման միջոցով։

Բնական զուգավորումը լինում է լերկու ձևի։

1. Զուգավորման խառը ձևը

Այս ձևի ժամանակ խոյերին և մայրերին զուգավորման ամբողջ ժամանակշրջանում խառնում են իրար, վորի ժամանակ զուգավորումը կատարվում է առանց ընտրության, և խոյերը պատահականորեն ու անկանոն կերպով ծածկում են մաքիներին և ուժասպառ լինում, վորի հետևանքով մայրերի 15—20 %-ն ստերջ է մնում, քանի վոր մեկ խոյը կարող է միևնույն մաքուն մի քանի անգամ ծածկել, իսկ մի ուրիշ մաքու չծածկել և վոչ մի անգամ։

Զուգավորման այս ձևի ժամանակ ընտրության մասին, իհարկե, խոսք լինել չի կարող, վոր ամենադլխավորն է, մինչդեռ այս ձևի զուգավորման ժամանակ մեր ցանկացած խոյը չի ծածկի այն մաքիներին, վորոնց մենք ենք ցանկանում, վոր ծածկի, և կծածկի բոլորովին այլ մաքիների, վորոնց մենք նպատակ չենք ունեցել ծածկել այդ խոյով։ Այսպիսով վոչ միայն անհնար է դառնում ընտրությունը, այլև անկարող ենք վորոշել սերնդի ծագումը։

Զուգավորման այս ձևը գործադրվում է վոչ կոլտնտեսրական անտեսություններում։ ՎԱՖ-ում այդ յեղանակի գործադրումն անթույլատրելի է։

2. Զուգավորման ձեռնաթաս ձևը

Ձեռնաթաշ զուգավորման ձևը պիտի կիրառել։

ա) վոչխարաբուծական տոնմային ֆերմաներում, վորովհետև անհրաժեշտ է իմանալ սերնդի ճիշտ ծագումը։ Համաձայն ԽՍՀՄ ՀԺԿ 1933 թ. 19/VI վորոշման, տոնմային ՎԱՖ-ում արգելվում է զուգավորման խառը ձևի կիրառումը։

բ) կոլտնտեսրուդ վոչխարները մերինոներով և կարակուլներով մեսխացնելու ժամանակ հիշյալ ցեղի խոյերը հաճախ առանց մարդու ոգնության չեն կարողանում ծածկել ճարպապոչավոր մաքիներին, վորի պատճառով մաքիներն ստերջ են մնում։

գ) բոլոր այն դեպքերում, յերբ անհրաժեշտ է մաքիմալ չափով ոգտագործել բարձրակ արտադրողներին և հնարավորություն չկա արհեստական սերմնավորում կիրառել։

Ձեռնաթաս զուգավորման տեխնիկան

Ձեռնաթաշ զուգավորման ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները.

ա) զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում մայրական հոտերն արծեցնել և խնամել խոյերից առանձին։

բ) Նախքան կերակրելը և արոտի տանելը, ամեն որվա առավոտյան ժամը 6—7 պիտի կատարել զոչի յեկող մաքիների ընտրությունը։ Դրա համար վոչխարների հոտերը պիտի բաժանել մասերի, յուրաքանչյուր մասը վոչ ավելի քան 250 գլուխ, և այդ մասերից ամեն մեկի մեջ թողնել համապատասխան թվով փորձախոյեր։ Փորձախոյերի առաջին վոտքերի հետևից գոգնոց են կապում, այնպես, վոր գոգնոցը կախվի խոյի սեռական անդամի

ՀԱՍ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գլ. Ուսումնական Գրադարան
ՀՍՍՀ-ՍՍՌ

առջևից, վորով խոյը զրկվի մաքուն զուգավորելու հնարավորությունից։ Գոգնոցը սովորաբար լինում է չքիթ 30×40 սմ չափով։ Գոգնոցի չորս անկյունից թելեր են ամրացնում և կապում խոյի մեջքին։ Ցուրաքանչյուր փորձախոյի համար պիտի պատրաստել յերկուական գոգնոց, վորպեսզի հնարավորություն լինի ժամանակին լվանալ և մաքուր պահել։

գ) ղոչի յեկող բոլոր մաքիներին պիտի առանձնացնել վոչխարանոցի կամ աղալի հատուկ բաժանմունքում։ Անհրաժեշտ է ամեն անգամ փորձախոյերի միջոցով հայտաբերել բոլոր ղոչի յեկող մաքիներին՝ թուլլ չտալով, վոր հոտում յեղած՝ ղոչի յեկող մայրերը մնան առանց հայտաբերման կամ ել հայտաբերվեն վոչ լրիվ կերպով։

դ) Նախքան զուգավորման թողնելը, ղոչի յեկող բոլոր մաքիներին պիտի յենթարկել ստուգման՝ պարզելու համար նրանց սեռական գործարանների վիճակը։

ե) վոչխարանոցը կամ աղալը, վորտեղ անց է կացվում ձեռնաքաշ զուգավորումը, պիտի բաժանել բաժանմունքների, հետևյալ ձևով։



«ա» բաժանմունքը նշանակված է զուգավորման սպասող մայրերի համար, «բ»՝ արդեն զուգավորված մայրերի, «ե» կատարվում է ձեռնաքաշ զուգավորում, «գ» տեղավորվում են զուգավորման սպասող խոյերը, «դ» բաժանմունքում տեղավորում են մայրերին զուգավորած խոյերը։

զ) Նախքան զուգավորումը, վոչխարաբուժական տոհմային ֆերմաների բոլոր մայրերը և խոյերը պիտի համարակալել ականջի համարներով (ականջի գնտերով)։

է) Ձեռնաքաշ զուգավորման ժամանակ պիտի հետևվել և իմանալ, թե խոյը ցատկելիս իրոք զուգավորեց, թե վոչ։

Զուգավորման ակտի մոմենտին յեթե տեղի յե ունենում խոյի բնորոշ ցնցում, նշանակում է զուգավորման ակտն արդեն կատարված է։ Միևնույն որը մաքուն յերկուանգամ զուգավորելն արգելվում է։

Բոլոր ղոչի յեկող մայրերին պիտի զուգավորել նույն որը։

ը) Ձեռնաքաշ զուգավորումը կատարվում է հետևյալ կերպ։

Ցանկապատած բաժանմունք կամ աղալ է արվում մեկ մայր վոչխար, վորի գլուխը բռնելով՝ հովիվը սպասում է մինչև մյուս հովիվը բաժանմունքների մեկից կթողնի խոյին։ Այն մոմենտին, յերբ մոտենում է խոյը և փորձում է ծածկել մաքուն, մաքու գլուխ բռնող հովիվը միաժամանակ վեր է բարձրացնում մաքու ճարպապոչը (դմակը)։

թ) զուգավորված մայրերի խաչոսկրի բրդի վրա ներկով նշան պնել (ներկը լուծելով նավթի մեջ)։ 10—12 որ անց, յեթե մաքին կրկին ղոչի յե գալիս, պիտի զուգավորել և բրդի վրա յերկրորդ նշանն անել, ըստ վորում այդպիսի մայրերը, չնայած վոր զուգավորված են յեղել, բայց չեն բեղմնավորվել։ Յերկրորդ անգամ ղոչի յեկող մաքիներին նույնպես պիտի հայտաբերել փորձախոյերով, դրա համար, զուգավորումից 10—12 որ անց, զուգավորված մայրերի հոտի մեջ թողնում են փորձախոյեր և ղոչի յեկող բոլոր մայրերին զուգավորում են նույն յեղանակով։

Խոյերի սերմորդի բեղմնավորման կարողությունն

ստուգելու համար անհրաժեշտ է իմանալ, թե մաքին առաջին զուգավորման ժամանակ վոր խոյից է զուգավորված յեղել։ Յեթե պարզվի, վոր խոյերից կան այնպիսիները, վորոնցից յերկրորդ անգամ ղոչի յեկող մաքիներ չատ կան, անհրաժեշտ է այդ խոյերին խոտանել՝ փոխարինելով պահեստի խոյերով.

ժ) այն խոյերը վորոնք հրաժարվում են ծածկել մաքիներին, վոր հաճախ տեղի յե ունենում յերիտասարդ՝ 1½ տարեկանների հետ և առանձնապես մերինոսների հետ, անհրաժեշտ է այդպիսիներին դնել հատուկ կերակրման՝ խտացրած կերերով, տալով նաև որական 2—4 ձու, 1—2 լիտր քաշած կաթ.

ժա) 2½—6 տարեկան հասակավոր խոյին զուգավորման համար որական կարելի յե տալ 3—4 մայր վոչխար, 1½ տարեկան խոյին որական տալ 2 մայր վոչխար։

Թույլ խոյերին զուգավորման թողնել որըմեջ։ Յեթե ղոչի յեկող մայրերը թվով քիչ են, այդ դեպքում լավագույն խոյերին պիտի աշխատեցնել առաջին հերթին։ Յեթե խոյն առաջին անգամ թույլ չի տալիս ձեռնաքաշ յեղանակով զուգավորում կատարել, այդ դեպքում նրան ու մաքուն պիտի տանել վոչխարանոցի կամ աղալի բաժանմունքներից մեկը, վորպեսզի ազատորեն ծածկի։ Յերկրորդ որը կրկին թողնում են ձեռնաքաշի և յեթե կրկին չի զուգավորվել ձեռնաքաշ, թողնել մայր վոչխարի հետ բաժանմունքում, մինչև վոր խոյն ընտելանա ձեռնաքաշ յեղանակին.

ժբ) Վոչխարների զուգավորման կամպանիան պետք է վերջանա 30—35 որվա ընթացքում։ Այդ ժամկետից հետո մայրական հոտի մեջ թողնել 15—18 որ ժամանակով 5-6 լավագույն ու յեռանդուն կոպտաբուրդ խոյ, վորպեսզի ազատ ձևով զուգավորեն այն մայրերին, վորոնք

պատահականորեն չեն բեղմնավորվել, և այդպիսով նվազագույն չափերի հասցնել ստերջ մնացող մայրերի թիվը։

Ձեռնաքաշ յեղանակի դեպքում, զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում, 500 գլուխ մայրական հոտ սպասարկող հովվական բրիգադին պիտի տալ լրացուցիչ 2 մարդ, վորոնք մյուս հովիվների հետ կինամեն վոչխարներին և կկատարեն ձեռնաքաշ զուգավորումը։

Խոյերին պիտի ոգտագործել հերթականորեն և վորոշ ժամանակի ընդմիջումով, վորը հնարավորություն է տալիս խոյին հանգստանալ։ Խոյի առաջին ծածկումը արվում է առավոտյան ժամը 7—8-ին։

2-րդ ծածկումն 1-ին ծածկումից կես ժամից վոչ շուտ։

3-րդ ծածկումը՝ ճաշից հետո՝ ժամը 3—4-ին։

Զուգավորված մայրերը յուրաքանչյուր հոտում ընտրվում են առանձին-առանձին խմբերով։ Այնտեղ նրանք պահվում են գիշերներն առանձին և մյուս որն առավոտյան փորձախոյերի միջոցով ստուգվելով՝ նորից խառնվում են վոչխարների նույն հոտին։ Ղոչի յեկող մայր վոչխարների ընտրությունը յուրաքանչյուր հոտում կատարվում է 30—35 որվա ընթացքում։ Այդ ժամանակամիջոցում ընտրվում են ինչպես առաջին անգամ ղոչի յեկող մայրերը, նույնպես և կրկնակի անգամ ղոչի յեկողները։

Վոչխարաբուծական այն ֆերմաներում, վորոնցում պլանով նախատեսված է այս աշնանն արհեստական սերմնավորում անցկացնել, անհրաժեշտ է նախքան վոչխարների զուգավորումն սկսելն ապահովել արհեստական սերմնավորման կայանն անհրաժեշտ կահավորումով և գույքով։ Անհրաժեշտ գույքի թվում պետք է նախապատրաստել արհեստական սերմնավորման յուրաքանչյուր կայանի համար մեկ հատ զուգավորման դազդահ (случний станок)։

Նպատակահարմար է արհեստական սերմնավորման պունկտերի համար կառուցել հետևյալ տիպի դազդահ

1. Դազդահը կառուցվում է տախտակից։

2. Դազդահի բարձրությունը կազմում է 76 սանտիմ.։

3. Դազդահի կտրվածքը, վորի մեջ է մտնում վոչխարի վիզը, ուղիղ 9 սանտիմ.։

4. Կտրվածքի աջ և ձախ տախտակյա մասերի յուրաքանչյուր կողմը կազմում է 10-ական սանտիմ.։

5. Դազդահի կտրվածքի հիմքից մինչև կտրվածքի վերին ծայրը կազմում է 47. սմ։

6. Դազդահի կտրվածքից մինչև դազդահի հիմքի մակերեսը կազմում է 29 սմ։

7. Դազդահի կտրվածքի 2 կողմի վրա անել 2 անցք։ վորոնց միջև անցկացնել յերկաթյա ձող՝ վոչխարի վիզը դազդահի մեջ ամուր պահելու համար,

8. Դազդահի տախտակյա պատվանդանի մակերեսն ունի հետևյալ չափումները—յերկարությունը՝ 120 սմ և լայնությունը՝ 65 սմ։

9. Դազդահն ամրացվում է տախտակյա պատվանդանի վրա՝ նրա մեկ ծայրից 90 սմ հեռավորության վրա։

10. Դազդահի առջևի մասում արհեստական սերմնավորողի համար գետնի մեջ պետք է փորել փոս՝ խորությամբ 60 սմ և լայնությամբ 50 սմ։ Փոսը պետք է լավ հարթել և տախտակել 4 կողմից և պատրաստել տախտակյա կափարիչ։

11. Փոսը պետք է փորել սերմնավորման բաժանմունքի հարավային կամ հարավարևելյան կողմում ընկած լուսամուտի տակ՝ պատից 25 սմ հեռավորության վրա։

12. Սերմնավորողը նստելով փոսի յեզրին՝ վոտները կախ է գցում փոսի մեջ։

13. Այն լուսամուտը, վորի առջև դրվում է դազդահը, պետք է լինի հատակի մակերեսից 50 սմ բարձրության վրա։ Յեթե լուսամուտը հատակի մակերեսից 50 սմ ավելի բարձր է շինված, պետք է քանդել և իջեցնել։

14. Այն վոչխարաբուծական ֆերմաները, վորոնք ունեն 1000—2500 և ավելի մայր վոչխար, սերմնավորման աշխատանքներն ավելի արագ կատարելու համար կարող են կառուցել շարժական—պտտվող դազդահ, վորը հնարավորություն կտա արագ կատարելու սերմնավորման գործողությունը։

15. Պտտվող դազդահը նույն դազդահն է՝ ամրացված պտտվող հատակի վրա, վորն ունի կլոր ձև։

16. Շարժական դազդահը կարելի յե կառուցել այն պունկտերում, վորոնցում հատակը տախտակած է։

17. Այնտեղ, վորտեղ պետք է ամրացվի դազդահը, կլոր կտրվում է հատակի տախտակը 140 սմ տրամագծով։

18. Պտտվող դազդահը պտտվում է ամուր շինված իր առանցքի շուրջը և միաժամանակ իր յեզրերով եկ շփվում է տախտակի հատակի յեզրերի վրա։ Վերջինիս յեզրերը մեկ սմ ամբողջ շրջագծով փորված են լինում։

19. Արհեստական սերմնավորման աշխատանքները կայաններում այնպես պետք է կազմակերպել, վորպեսզի յուրաքանչյուր մայր վոչխարի սերմնավորումը [illegible] րոպեից ավել չտևի։

20. Այն արհեստական սերմնավորման կայաններում, վորտեղ հատակը տախտակից է, կարիք չկա դազդահի համար տախտակյա պատվանդան շինել, այլ անմիջապես դազդահը ամրացվում է հատակին։ Բացի դազդահից, բոլոր վոչխարաբուծական ֆերմաները նախքան բեղմնավորման

կամպանիան պետք է պատրաստեն անհրաժեշտ քանակությամբ տախտակյա շչիտներ. այդ շչիտներից մի քանի հատ իրար կողքի դնելով և իրար ամրացնելով պատրաստում են աղալներ կամ զագոններ։ Յուրաքանչյուր ՎԱՅ պետք է պատրաստի 20—30 շչիտ։

10. ՀԱՇՎԱՌՈՒՄ

Զուգավորման կամպանիայի նորմալ ընթացքի դեպքում, զուգավորման առաջին 15-որյակում պիտի զուգավորված լինի ամբողջ մայրերի 75%-ը։ Եթե այդ ժամանակամիջոցում չի զուգավորվել մայրերի 50%-ը, նշանակում է աշխատանքները շատ թույլ են ընթանում և անհրաժեշտ է լուրջ միջոցներ ձեռք առնել՝ վերացնելու այն արգելքները, որոնք խանգարում են զուգավորումը ժամանակին ավարտելը։ Յուրաքանչյուր հոտում բրիգադիրը պիտի ձեռնարկի զուգավորման հետևյալ հաշվառումները։

Ամիս և տարի	Խոշոր եղջերավոր անասունների ֆոնդի մեջ մտնող մայրերի	Խոշոր եղջերավոր անասունների ֆոնդի մեջ մտնող մայրերի	Խոշոր եղջերավոր անասունների ֆոնդի մեջ մտնող մայրերի	Խոշոր եղջերավոր անասունների ֆոնդի մեջ մտնող մայրերի	Խոշոր եղջերավոր անասունների ֆոնդի մեջ մտնող մայրերի	Խոշոր եղջերավոր անասունների ֆոնդի մեջ մտնող մայրերի	Ընդամենը զուգավորված են մայրեր			Խոշոր №		Խոշոր №		Խոշոր №
							Ընդամենը	II Սեռամիս	I Սեռամիս	Ընդամենը	II Սեռամիս	I Սեռամիս	Ընդամենը	II Սեռամիս	I Սեռամիս

ՀՍՍՀ ԳԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ

Զուգավորման ամսական հաշվառում

| № գոմ կամ վանդակ | Մայր հիմնական № | Մայր հիմնական ցեղանունը | Մայր հիմնական հոր համարը | Մայր հիմնական դիպուկ համարը | Գ. Ամ — թվականի | Գոմ և № | Փոխարինող գոմ № | Զուգավորման ամսաթիվը | Զուգավորման գոմի № տարեթիվ գոմի մայր հիմնական ցեղանունը | Զուգավորվածի գոմ (տեսակ) | № | Սերունդ | | | | | | | | | | | | | |

640

22.274

Наркомзем СССР
Управление животноводства

СЛУЧНАЯ КОМПАНИЯ ОВЕЦ

Сельхозгиз Ереван 1936